

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
2018 Թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հաշվետու ժամանակում ակադեմիայում իրականացվել են աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

**1. Ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում.**

2018թ. ակադեմիայում վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթաց է անցել 2003 ունկնդիր (այլանով՝ 1855) 104 ուսումնական խմբերում (այլանով՝ 86 խումբ):

- ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից ուսուցում է անցել 532 ունկնդիր.
- ՀՀ մարզերից ուսուցում է անցել 427 ունկնդիր.
- Երևանի քաղաքապետարանից և Երևան քաղաքի վարչական շրջաններից ուսուցում է անցել 672 ունկնդիր.
- այլ կազմակերպություններից ուսուցում է անցել 372 ունկնդիր:

**2. Հրշեջ-փրկարարների վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ.**

**ՓԾ ծառայողների 2018թ.-ի վերապատրաստման դասընթացների անցկացման պլան-ժամանակացույցի համաձայն ուսուցում պետք է անցնեին 259 ծառայող:** Հաշվետու ժամանակահատվածում ԱԻՆ ՓԾ ծառայողների 2018թ.-ի դասընթացների պլան-ժամանակացույցի համաձայն դասընթացներին, առարկայական ստուգարքներին մասնակցել են 149 ՓԾ ծառայող (Արարատի և Արմավիրի ներքին որակավորման արագ արձագանքման թիմերի վերապատրաստում տեղի չի ունեցել): Սակայն ՀՀ ԱԻ նախարարի և ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի համապատասխան հրամաններով իրականացվել են արտապլանային դասընթացներ ևս **322 մասնակիցների** հետ:

**Այսպիսով՝ պլան-ժամանակացույցով նախատեսված 259 ունկնդրի փոխարեն դասընթացներին, առարկայական ստուգարքներին մասնակցել են 471 ունկնդիր:**

**Նույն ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել են ԱԻՆ փրկարար ծառայությունում ծառայության անցնողների եռամսյա ուսումնական փորձաշրջանի դասընթացներ անցնողների ստուգարքներ: 320 մասնակից, որից փորձաշրջանն ավարտել են 228-ը, փորձաշրջանում են գտնվում 92-ը, 2-ը հրաժարվել են, 1-ը հեռացվել է (27.12.2018թ. դրությամբ):**

**3. Բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում.**

<b>Ուսանողների թիվը</b>	<b>Բակալավրի կրթական ծրագիր</b>		<b>Մագիստրոսի կրթական ծրագիր</b>		<b>Միջին մասնագիտական կրթական ծրագիր</b>
	Առկա	հեռակա	առկա	հեռակա	
<b>Ընդունվել է՝</b>	<b>61, որից 40-ը՝ անվճար</b>	<b>122, II կուրս՝ 20</b>	-	<b>22</b>	<b>78</b>
<b>Ավարտել է՝ 206</b>	<b>50</b>	<b>98</b>	-	<b>18</b>	<b>40</b>
վերականգնված	34	81	-	-	-
ազատված /ազգային բանակ	40	33	-	-	1
ազատված /այլ պատճառով	31	97	-	6	12
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ուսանողների թիվը 25.12.2018 թ. դրությամբ</b>	<b>259, որից 162-ը անվճար</b>	<b>576</b>	-	<b>46</b>	<b>183</b>

**Այսպիսով՝**

- 1. Բակալավրի կրթական ծրագրով ուսանողների թիվը 835 է,**
- 2. Մագիստրոսի կրթական ծրագրով ուսանողների թիվը՝ 46,**
- 3. միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորողների թիվը՝ 183:**

Առ 25.12.2018 թ. ակադեմիայում սովորում է **1064** ուսանող:

#### **4. Բնակչության ուսուցում.**

Բնակչության ուսուցման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- արտակարգ իրավիճակներից պաշտպանության հարցերով ելույթներ զանգվածային լրատվամիջոցներով:
- Վերապատրաստման մասնակցած ՆՈՒՀ-ի, նախադպրոցական կրթական հաստատությունների, հանրակրթական դպրոցների, ՄՄՈՒՀ-ի. ԲՈՒՀ-երի ներկայացուցիչներին տրվել են ակադեմիայում ստեղծված ուսումնական նյութերն ու դրանց էլեկտրոնային տարբերակները:
- Բնակչության ուսուցման նպատակով ստեղծվել է էլեկտրոնային հարթակ՝ դիմակայուն գրադարան- <http://library.cmsa.am/hy/>
- Ներդրվել է անտառային հրդեհներ թեմայով էլեկտրոնային խաղ [dasaran.am](http://dasaran.am)-ի հետ և աշակերտների կողմից խաղերի թիվը նշված թեմայով գերազանցել է 30000-ը:

#### **5. Գիտամեթոդական աշխատանքների կատարում.**

- Հրատարակվել է «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուն, որում ընդգրկված է 35 հոդված (որից 24-ը գրվել է ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից), շուրջ 30 ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք, «Ճգնաժամ հաղթահարողները» ուսանողական թերթը:
- Հրատարակվել է միջբուհական ուսանողական գիտաժողովի նյութերը՝ նվիրված Սպիտակի երկրաշարժի 30-ամյա տարելիցին «Դիմակայուն Հայաստան» խորագրով:
- Տրվել են կարծիքներ 3 գիտական աշխատանքների վերաբերյալ:
- Ղեկավարվել է 18 մագիստրոսական ատենախոսություն:
- Մշակվել են կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր և այլ փաստաթղթեր կրթության զարգացման և որակի ապահովման ուղղությամբ:
- Ներկայացվել են շուրջ 30 զեկուցումներ միջազգային գիտական, գիտագործնական խորհրդակցություններում և խորհրդաժողովներում:
- Ապահովվել է 911 էլեկտրոնային պաշտոնաթերթի կայուն գործունեությունը:

## **6. Մշակութային դաստիարակության աշխատանքների կատարում.**

Հաշվետու տարում մշակութային դաստիարակության աշխատանքների կատարման ուղղությամբ ուսանողներն իրականացրել են միջոցառումներ մի շարք դպրոցներում, մանկապարտեզներում և այլն,

- իրականացրել են միջոցառումներ «Ակադեմիա 911» ուսանողական պարի և «Ակադեմիա 911» ստեղծագործական համույթների ներկայացմամբ՝ մանկատներում, մանկապարտեզներում, Լուսե կենտրոնում, ՀՀ ոստիկանության երեխայի զարգացման կենտրոնում: Մասնակցել են հանրապետական և միջբուհական ուսանողական սպորտային մրցումներին, «ՄԻԿԱ» մարզահամալիրում տեղի ունեցած ԱԻՆ և Վրաստանի անվասայլակով բասկետբոլի թիմերի ընկերական հանդիպման և միջբուհական ուսանողական գիտաժողովի բացման արարողությանը,
- կազմակերպել են մշակույթի կենտրոնի նկարչական խմբի աշխատանքների ցուցահանդես, համերգներ նվիրված ԱԻՆ նվագախմբի 8-ամյակին, մայրության և գեղեցկության միջազգային օրվան, ԱԻՆ 27- ամյակին և այլն

## **7. Միջազգային համագործակցություն.**

Ակադեմիան իրականացրել է ուսուցման միջազգային ծրագրեր ՄԱԿ-ի UNDP-ի, unisef-ի, Սեյվ դը Չիլդրեն-ի, Գերմանական կարմիր խաչի շրջանակներում, մասնակցել է մի շարք գիտագործնական սեմինարների Ռուսաստանի Դաշնությունում, Մոլդովայի, Վրաստանի և Հայաստանի Հանրապետություններում:

## **Լրացուցիչ աշխատանքներ.**

- Ակադեմիան շարունակում է ինստիտուցիոնալ հավատարմագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:
- Ուսումնասիրվում են դիստանցիոն (հեռավար) ուսուցման ներդրման հարցերը:
- Դասախոսները մշտապես մասնակցել են քաղաքացիական ծառայողների մրցույթային և ատեստավորման հանձնաժողովներին, ԱԻՆ առանձնացված ստորաբաժանումների մասնագետների ատեստավորման հանձնաժողովների նիստերին և ԱԻՆ կրթության հարցերով գիտագործնական սեմինարներին, թվով 12 տարբեր թեմաներով ուսումնավարժությունների կազմակերպման և վերահսկման աշխատանքներին, Ռուսաստանի Դաշնության (Կրասնոյարսկ)՝

Սիբիրի տարածաշրջանային որոնողափրկարարական ջոկատի բազայում կայանալիք «KoBo Toolbox» հատուկ ծրագրային ապահովման կիրառման ուսումնական դասընթացին,

- իրականացրել է որակավորման քննություններ, սեմինարներ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ,
- մշակվել է կամավոր հրշեջ-փրկարարական ջոկատների պատրաստման ծրագրեր,
- շարունակվում են աշխատանքներն Ակադեմիայի կայքի բարելավման ուղղությամբ:

### ***Առկա հիմնախնդիրները և 2019թ-ին նախատեսվող աշխատանքները***

- ինստիտուցիոնալ հավատարմագրմանն ուղղված միջազգային գործունեության ակտիվացում:
- Բակալավրի, մագիստրոսի և միջին մասնագիտական կրթական ծրագրերի լրամշակում, առարկայական ծրագրերի թարմացում:
- Հեռավար ուսուցման մեթոդների ուսումնասիրում և ներդրման հիմքերի ձևավորում:
- «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուի տարեկան 2 համարի հրատարակում:
- «Լուսակերտ» ուսումնագործնական պարապմունքների բազայում վարժաիրապարակի զարգացում, նոր մոդելների ձևավորում (ծխապատ տարածք, հրապարակ թռչող սարքերի համար և այլն):